Digitally signed by
MAMULYAN NARINE 6108940794
Date: 22.05.2026 15:08:32

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
20.05.2026 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
հասարակական կազմակերպության 2025 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅ ԽՈՀԱՐԱՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
1.2 ՀՎՀՀ-ն		00096036
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Արաբկիր 49փ. 4
1.4 Պետական գրանցման համարը		211.171.04468
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2007-07-27
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99411881
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		Araratyankhohanoc@gmail.com
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ՍԵԴՐԱԿ	ՄԱՄՈՒԼՅԱՆ	Նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Կազմակերպել բազմաղարյան, ավանդական հայկական խոհանոցի բաղադրատոմսերի հավաքը և գրանվել դրանք մեկ ընդհանուր աշխատության մեջ, ինչպես նաև աշխատանքներ տանել նոր բաղադրատոմսերի ստեղծմանն և գրանցել դրանք,		
Կազմակերպված և հիմնավոր պայքար ծավալել հայկական խոհանոցի բաղադրամասերի յուրացման դեմ,		
Մասնակցել խոհարարական միջազգային մրցույթներին, սեմինարներին և ժողովներին (հայկական խոհանոցը պատշաճ ներկայացնելու և համապատասխան փորձ ձեռք բերելու համար),		
Կազմակերպել խոհարարների մրցույթ, տարվա լավագույն 3 լավագույն խոհարարները նոմինացիայով,		
Կազմակերպել սեմինարներ, պարապունքներ և ժողովներ՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ,		
Կազմակերպել խոհարարների իրավական պաշտպանությունը՝ հարկ եղած դեպքում: Նպաստել աշխատանքային պայմանագրերի կնքմանը յուրաքանչյուր մասնավոր դեպքում և հետևել պայմանագրի հստակ և ճիշտ կատարմանը,		
Աշխատանքներ տանել համախմբելու և ձևավորելու սերտ համագործակցություն Հայաստանում գործող խոհարարական բոլոր ուսումնական օջախների հետ, մասնակից դառնալով ապագա խոհարարների արվեստը բարձրացնելու և հայկական ազգային ուտեստները ճիշտ պատրաստելու և մատուցելու գործում,		
Իր նպատակներնն ու խնդիրներնն իրականացնելու համար կազմակերպությունը համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, ՀՀ-ում գրանցված այլ կազմակերպությունների հետ:		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		12
4.2 Կամավորների թիվը		
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		6

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	"Միմինո" խորագրով հայ-վրացական մշակութային-խոհարարական փառատոն	Դիլիջան	հայ-վրացական մշակույթի ներկայացում	Ավարտված
2	Վերապատրաստման ուսումնական ծրագիր	Երևան	Վերապատրաստել գործող ուսումնարանի վարպետներին	Ավարտված
3	Համերի բազմազանություն և ազգերի բարեկամություն	Արզնի	Ազգային փոքրամասնությունների բարեկամության ամրապնդում	Ավարտված

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	"Միմինո" խորագրով հայ-վրացական մշակութային-խոհարարական փառատոն	Դիլիջան	Ավարտված	հայ-վրացական մշակույթի ներկայացում	Ավարտված
2	Համերի բազմազանություն և ազգերի բարեկամություն	Արզնի	Ավարտված	Ազգային փոքրամասնությունների բարեկամության ամրապնդում	Ավարտված

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	16,262,801
8.2 Գույքը	
Ընդամենը	16,262,801

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	12,000,000	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	12,000,000	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	15,967,481
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		15,967,481

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	12,000,000
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		12,000,000

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

6.2 կետում նշված ծրագիրը իրականացվել է «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» Հիմնադրամի ֆինանսավորմամբ 1,000,000 դրամ

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____2_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ
ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47
www. 4aconsulting.am
info@4aconsulting.am
"Four A Consulting" CJSC
CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47
audit accounting advisory assurance

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» Հասարակական Կազմակերպության կառավարման մարմիններին,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» Հասարակական Կազմակերպության 2025թ. գործունեության հատուկ նպատակի ֆինանսական հաշվետվությունը՝ այսուհետև Հաշվետվություն:

Մեր կարծիքով, «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» Հասարակական Կազմակերպության կից ներկայացված հաշվետվությունը՝ հանրային միջոցներից ֆինանսավորման մասով բոլոր էական առումներով տալիս է դրամական միջոցների մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների վերաբերյալ ճշմարիտ և իրական պատկերը 2025թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար "Հասարակական Կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

Կարծիքի հիմքը

Աուդիտն անցկացվել է Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է սույն եզրակացության՝ "Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար" բաժնում: Աուդիտորն անկախ է Հասարակական Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պարտավոր է պահպանել ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում աուդիտին վերաբերող էթիկայի այլ պահանջները: Աուդիտի ընթացքում ձեռք է բերվել բավականաչափ և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ կարծիք արտահայտելու համար:

Հաշվետվության համար Կազմակերպության Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Կազմակերպության ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է Կազմակերպության դրամական միջոցների ձևավորման և ծախսման գործընթացները, դրամական միջոցների մուտքի և ելքի օրինականությունը, և օգտագործման գործընթացները:

Կազմակերպության Ղեկավարությունը պատասխանատու է նշված հաշվետվությունը կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է սխալի կամ խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ հաշվետվություն՝ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանումը, կիրառումը և պահպանումը:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Կազմակերպության Հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ հաշվետվությունը բոլոր էական առումներով զերծ ՝ էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով հաշվետվության էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

19 մայիսի 2026թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր/ Աուդիտի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՖՈՐ ԷՅ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 22.05.2026 15:08